

Ք Ն Ն Ա Դ Ա Տ Ն Ե Ր Ի Ն

Ե. ՄԱԴԱԹԵԱՆԻ

Սրանից մի քանի ամիս առաջ մեր բանասէրների ուշադրութեանը ես առաջարկեցի իմ անդրանիկ քննական փորձը՝ «Փաւստոս Բուզանդ»։ Համոզւած լինելով, որ ալդ ամենանշանաւոր, բալց և ամենից քիչ ուսումնասիրւած հալ պատմիչներից մէկին վերաբերեալ հետազոտութիւնս գերծ չի լինիլ նոյն իսկ խոշոր պակասութիւններից, ես ալնու ամենալնիւ սովորական ներողամտութեան փոխարէն սպասում էի խիստ և անաչառ քննադատութեան, ինչպէս ասել եմ նաև դրքովիս ներածութեան մէջ։ Եղան մարդիկ, որ աչքաթող արին իմ ալդ հրաւէրը և բաւականացան համաւշտ գրախօսական նկատողութիւններով կամ իմ խեղճ գլուխը գովելով, բալց բարեբաղդաբար աւելի շատ եղաւ ալնախիսիների թիւը, որոնք կամեցան կամ ցոյց տւին թէ կամենում են լրջօրէն վերաբերել գործին, որոշելով իմ աչխատութեան իսկական արժէքը և լոյս սփռելով իմ չօչափած մութ խնդիրների վերալ։ Եթէ առաջին կարգի քննադատներից շնորհակալ պիտի լինիմ միալն ես, երկրորդ կարգի կրիտիկոսներին՝ ինձ հետ միասին երախտապարտ պիտի լինի նաև բանասէր հասարակութիւնը։ Խնդիրը ալն է միալն թէ որքան չաջողութեամբ են կատարել իմ չարգելի կրիտիկոսները իրանց չանձն առած պատասխանատու գերը։

Փաւստոսին վերաբերեալ խնդիրները պատում են հետեալ երեք հարցերի շուրջը. նախ՝ թէ ով էր Բուզանդ, երկրորդ՝ թէ ինչ լնգուով պատմալրեց, և երրորդ՝ թէ ինչ դրութեան մէջ է հասել մեզ նորա պատմութեան բնագիրը։ Իմ ներկալ բացատրութիւնը դրւած է հէնց ալն առարկութիւնների առիթով, որոնցով ոմանք կարծում են խախտել իմ տեսութեան հիմքը։ Ընթերցողը կը ներէ ինձ, որ ստիպւած եմ ալատնղ երկրորդել դրքովիս մի քանի կէտերը։

Փաւստոսի ծագման խնդիրը լուծելու համար՝ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել մանաւանդ հետեալ հատւածի վերալ, որ դրւած է Բուզանդարանի վնցերորդ գալուութեան ցանկի վերջում. «Ստորոտ ամենալն

պատմութեանց լաղազս իմ տեղեկութեան, որք մի անգամ զմատեանս ընթեռնոք, տունք տասն՝ համարական թուօք»։ Այս հատուածը գիտնականները հասկանաւ էին ալնպէս, իբր թէ պատմիչը իւր աշխատութեան վերջում տեղեկութիւն է տւել իւր մասին. ուստի չը դառնելով ալդ տեղեկութիւնը, ենթադրում էին թէ Բուզանդարանի վերջից պակաս է տասը տուն։ Իմ փորձի մէջ զոչն հատուածին ես տալիս եմ տարբեր մեկնութիւն. «Իմ մասին տեղեկութիւններ բովանդակող բոլոր գլուխներից լետու, ընթերցողներդ կը գտնէք թուով տասը գլուխ», և ալդ է Փաւստոս եպիսկոպոսին և նորա եղբօր ներած գլուխներին լաջորդող չօգւածների թիւը։ Ես չեմ տւել ալդ հատուածի բառացի թարգմանութիւնը, ալ ներկայացրել եմ միայն միտքը (եր. 6), բայց և ալնպէս ես պատրաստ եմ պատասխանել եմ կրիտիկոսներին¹⁾, որոնք քննադատում են իմ ալդ մեկնութիւնը, որպէս բառացի թարգմանութիւն։ Ինձ ասում են. 1) Եւթու Փաւստոս ցանկի վերջին է դրել ալդ նախադասութիւնը, եթէ պատմութեան վերջին չը պիտի տար իւր մասին տեղեկութիւն։ «Եթէ հինգերորդ գլխոյն մէջ պիտի կատարէր իւր խոստումը, — նկատում է նոյնպէս «Հանդէս Ամսօրեակի» քննադատը, — ցանկին մէջ ալ բնական էր որ Ե. գլխոյն տեղը դրէր ալս ծանօթութիւնը։ Աւելի բնական է կարծել թէ՛ որովհետեւ Ժ. Գլխոյ ցանկէն անմիջապէս ետքը դրած է ալս խոստումը, ճշդիւ հոն ալ պիտի գտնէր գրած, ալսինքն դրոց վերջը, և իբրեւ ի շատ ա կ ա ր ա ն»։ Զարմանալի լօգիկա. ուրեմն ալդ հատուածի միտքը կախած է իւր տեղից և ոչ թէ ալն բառերից, որոնք տալիս են նախադասութեանը իմաստ... Եթէ իւր կարծիքը քննադատը համարում է աւելի բնական, հետեւարար, նոյն իսկ իւր տեսակէտից, բնական է նաև իմը։ 2) Ինձ ասում են, տուն չէ նշանակում գլուխ — Թարգմանեցէք տուն. բանի էութիւնը դրանից չի փոխւի։ Պատմիչը տուն է անուանում Զ. դպրութեան գլուխները սկսած Բ. գլխից, որովհետեւ դրանք բոլորն էլ, ունենալով մի ընդհանուր վերնագիր («լաղազս եպիսկոպոսացն» և ալն) նաև կարճ կարճ են, ինչպէս լինում են սովորաբար ոտանաւորների կամ սաղմոսի տները։ 3) Ինձ ասում են. հինգերորդ գլխից լետու տասնըմէկ գլուխ է գալիս և ոչ տասը — Բայց չէ որ պատմիչը ասում է. «ստորոտ ամենալն պատմութեանց լաղազս իմ տեղեկութեան», և միայն վեցերորդ գլխից ենք մենք տեղեկանում, որ Փաւստոս «ազգով հոռոմ» էր։ Ինձ ասում են. 4) եթէ տեղեկութեան բառի փոխանակ տեղեկութիւն լինէր, ալն ժամանակ իմ մեկնութիւնը սխալ կը լինէր — Այո, բայց չալնի է որ բոլոր զրչադիրներում

¹⁾ Դեբոյիկի մասին հրատարակեցան յօդածներ Կետեկալ պարբերական հրատարակութիւնների մէջ. «Մօլլա» 1890 թ., № 1. «Աղբիւր» 1890 թ., № 1. «Արաքս» 1889 թ., № 3. «Հանդէս Ամսօրեայ» 1890 թ., № 3. «Արձագանք» 1890 թ., №№ 4, 6. «Նոր-Դար» 1890 թ., № 38.

տեղեկութեան ենք կարողում, և չը կա մի հատիկ զըշաղիւ տեղեկութիւն վարիանտով:

Ապացուցանելու համար, որ Փաւստոս լուծարէն է պատմագրել, ևս 1) հաստատել եմ, որ Նորա երկը չորրորդ դարու գործ է, որովհետեւ պատմութեան լառաջաբանում ակնարկած Թադաւորների շարքը՝ Զ. դպրութեան մէջ վերջանում է Խոսրովի և Արշակի անուններով, իսկ «գլխաւոր եպիսկոպոսները» շարքը՝ Ասպուրակէսի անունով, որի հովուութեան տևողութիւնը չէ որոշած (եր. 13): Այս առիթով «Հանդէս Ամսօրեայ»-ի քննադատը նկատում է. «Եթէ կը զօրէ այս ցուցումն, ապա ուրեմն Խորենացի ալ 441-ին գրած լինցուցած է իւր պատմութիւնը, վասն զի մինչև ա՛յն ժամանակ կը հասցնէ իւր աւարտաբանութիւնը»: Սակա՛յն այս ակնյալտնի թիւրիմացութիւն է. իմ ասածը ա՛յն չէ թէ՛ որովհետեւ Փաւստոս մինչև Ասպուրակէսի կաթողիկոսութեան ժամանակն է հասցրել իւր պատմութիւնը, ուրեմն հէնց ալդ ժամանակն էլ վերջարել է իւր գործը: Ալդ եղրակացութիւնը ես դուրս եմ բերել Բուզանդարանի լառաջաբանի («խոստաբանութեան») և վեցերորդ դպրութեան («առաջաբանութիւն վճարման») գուղադրութիւնից: Յառաջաբանում պատմագիրը խոստանում է հասցնել իւր պատմութիւնը «մինչև ի վերջին ժամանակն...», իսկ Զ. դպրութիւնից երևում է, որ ալդ «վերջին ժամանակը» Խոսրովի և Ասպուրակէսի ժամանակն է: Քննադատի մէջ բերած Խորենացու օրինակը շատ անկաջող է. ալդ կը նշանակէր վէճ բանալ քերթողահօր վերաբերեալ մի շարք խնդիրների մասին, որոնք կարօտ են առանձին հետազօտութեան:

2) Ես քննադատութեան եմ ենթարկել ա՛յն կարծիքը թէ չորրորդ դարում հայերէն գրելու սովորութիւն կար՝ պարսից, լուծաց, և ասորոց գրերով: Փոխանակ քննելու իմ բերած փաստերը, «Արաքս»-ի քննադատ պ. Նումէնը (էջ 120—121) ընդհանրացնում է խնդիրը և մատնանիշ է լինում Վիկտօր Լանգլուալի հեղինակութեան վերաջ որպէս զի հաստատէ, որ «Ե. Մ. (իմ նկատութիւնը) հալոց հին գրականութեան հետ լաւ ծանօթ չէ», և որ ինքը՝ պ. Նումէն՝ Վիկտօր Լանգլուալի Collection-ի լառաջաբանը կարդացել է, ուրեմն «հալոց հին գրականութեան հետ լաւ ծանօթ է»...

3) Պրօֆ. Պատկանեանի ա՛յն կարծիքի առիթով թէ Բուզանդարանը կարող է Թարգմանած լինել ասորերէն Թարգմանութիւնից, ես նկատել եմ որ ալդ ենթադրութեանը կշիռ տալու համար հարկաւոր էր մէջ բերել Բուզանդարանից՝ խորթ ասորաբանութեան օրինակներ, իսկ ինքս, իմ կարծիքս հաստատելու համար, առաջ եմ բերել մի երկու լուծաբանութիւն և մի քանի սակաւ գործածական լուծարէն բառեր: Ես առանձին նշանակութիւն եմ տւել ա՛յն հանգամանքին՝ որ Բուզանդարանում Վահագնը Հեռակ է անուանւած, իսկ Նախարար Բառի փոխարէն մի քանի անգամ կարդում ենք սատրապ, ինձ առարկում են թէ ալդ բառերը կարող էին լի-

նել և հալ ժողովրդի բերանում («Նոր-Դար», № 38).—Այն, բայց խնդիրը այդ չէ. լուծարէն բնագրում միայն շերակլէս է եղել, իսկ թարգմանիչը մեկնել է այդ անունը «Հերակլալ» ալսինքն վահագնի» (Դպր. Գ. գլ. 14). Դիցուք, սատրապ բառը կարող էր նմանապես ծանօթ լինել ժողովրդին, բայց ինչով մեկնենք որ նախ իսկ Բուզանդարանում անհամեստ աւելի լաճախ է դորձածած նախարար բառը:

4) Նս պնդել եմ, որ իւր ձևով և բովանդակութեամբ Բուզանդարանը սահմանած է երևում ընդարձակ շրջանի ընթերցանութեան համար. այդ պատճառով նորա լեզուն քիչ ունի օտարաբանութիւններ և աւելի բնական է քան մեր «կլասիկական» բարբառը, որ անմատչելի է եղել ժողովրդի մեծամասնութեանը: Այդ ասելով ես մտքովս անգամ չէի կարող անցկացնել թէ մի նոր բան եմ ասում: Բանից դուրս է գալիս, որ այդ QUASI «համարձակ և նորագիւտ գաղափարը» զայլացրել է իմ գիտնական քննադատներին: Նս չեմ պաշտպանիլ ինձ, թող խօսէ պրոֆ. Բ. Պատկանեանը, որի աւտօրիտետը, կարծում եմք, չեն ժխտում նաև իմ քննադատները. «Этот литературный языкъ, Востаникъ,—ասում է հանդուցեալ պրոֆէսորը, даже и въ IV вѣкѣ, не былъ народнымъ и живымъ. потому что съ тѣхъ поръ и до самаго нашего времени онъ не развивался далѣе и остановился при тѣхъ грамматическихъ формахъ, какия мы встрѣчаемъ въ немъ въ началѣ IV (?) вѣка. Видно по всему, что это былъ искусственный языкъ, который былъ въ употребленіи при дворѣ и канцеляріяхъ» (Исследование о составѣ армянскаго языка, стр. XIV).

Հիմնելով պատմիչի խօսքերի վերայ («է ինչ մեր պատմութիւն՝ որ տուաջին է, և է ինչ՝ որ վերջին է»), ես ապացուցել եմ որ Փաւստոս գրել է նաև հալոց հեթանոսական պատմութիւնը, որ մեր ձեռք չէ հասել: Փոխանակ ցոյց տալու իմ սխալը, «Հանգէս Ամսօրեալ»-ի քննադատը խորհրդաւոր եղանակով նկատում է. «խնդիր մեծ է թէ ինչ է ճշգիւ իմաստն ալս խօսքերուն»: Պ. Փարամեանը չէ «կարծում» որ «կարելի լինի ասել, որ նորա պատմութեան մի նշանաւոր մասը կորել է, քանի որ դորա հակառակ է խօսում Փարպեցու իսկական չառաջարանը: Դիւր ու թեւամբ կարելի է ընդունել,—շարունակում է «Արձագանք»-ի կրիտիկոսը, որ այդ առաջին գլուխը խմբագիր-թարգմանչին է և ոչ Փաւստոսինը, որով խնդիրը լուծած կը լինի» («Արձագանք», № 6, եր. 8): Ինչպէս տեսնում էք, պ. Փարամեանը նմանապէս նեղութիւն չէ տալիս իրան մտածելու թէ՛ «ինչ է ճշգիւ իմաստն ալս խօսքերուն» և դիւր ու թեւամբ ընդունում է մի հեթանոսական, որ ոչինչ հիմք չ'ունի և հակասում է նոյն իսկ իւր ալս կարծիքին թէ Բուզանդարանը բովանդակում էր մի քանի ազգերի պատմութիւն: Բայց ինչո՞ւ հիպօթէզներ սիրող կրիտիկոսը չէ ուղում ընդունել, որ Փարպեցու ձեռքի տակ եղած օրինակում կարող էր պակաս լինել Բուզանդի պատմութեան մի մասը:

Նս հիմունք չեմ տեսել պնդելու թէ փաւստոսի բնագիրը լի է օտարամուտ գրւածներով, քանի որ հական տարբերութիւն չը կալ մեղ լատնի գրչագիրների միջև, իմ կարծիքի դէմ փաստերով զինւելու փոխարէն, իմ քննադատները բողոքում են ենթադրութիւններով: Ի հարկէ, ամեն ոք ազատ է ունենալ իւր կարծիքը և ես հարկ չեմ տեսնում գերադասելու իմ հակառակորդների սուբիեկտիւ տեսակէտը:

Սրանով ես պէտք է վերջացնէի խօսքս, եթէ կարելի լինէր լռութեան տալ ալն անփութ վերաբերութիւնը դէպի կրիտիկոսի ծանր պաշտօնը, որ աչքի է ընկնում իմ փորձի առիթով գրւած մի երկու լուծում և որ բացառիկ երևութիւն չը լինելով մեր մամուլի մէջ, արժանի է վիշատակութեան: Բանն ալն է, որ իմ կրիտիկոսներից ոմանք, բացի իմ դրքովի թոյլ կողմերը լիշատակելուց, ձգտում են ցոյց տալ, որ աւելի զիտեն քան որ զիտեն իսկապէս և ալլ նպատակով գործ են դնում ներքի և աններքի միջոցներ: Ներքի եմ համարում ես, երբ քննադատը չեղում է բուն հարցից, մանրամասն է կանգ առնում մանր խնդիրների վերալ և կրկնում է վաղուց լատնի և ձանձրալի դարձած ճշմարտութիւններ: Բայց աններքի է հեղինակի խօսքերն աղաւաղելը, նրան չը հասկանալու դնելը և բանագողութիւններ անելը... Նս մէջ կը բերեմ մի քանի փաստեր:

Արաքս¹⁾-ի սրախօս քննադատ պ. Նումէնը, նկատելով որ իմ գրքովի մէջ լաճախ է գործածւած համարեալ բառը, իւր կողմից աւելացնում է. «Մենք ես մեր կողմից նկատում ենք, որ Պ. Ս. Մ. Նոյնպէս համարեալ թէ առանց աւելի հարկաւոր գրքեր կարդալու չանձն է առել փաւստոս Բողանդացուն քննադատել. հակառակ դէպքում չէր համարձակի, ի միջի ալլոց, Փ. Բուզանդացու և Աղաթանդեղոսի պատմութիւնների մէջ նմանութիւն հղրակացնել ալնպիսի հատւածներից (էջ 34), որոնք կարող էին քիչեալ պատմութիւնների մէջ սպաղել Ս. Գրքից, օրինակի համար՝ «Ո՞վ չափեաց ղերկինս» և ալլն հանւած է Նսալիի դրքից, դ. խ. 12^ա: Այն ինչ արժէր միայն քիչել իմ նոյն եր. 34 ծանօթութիւնը, որտեղ տււած է. «Նթէ չենք սխալում, առաջին հատւածը ունի և Կորին, իսկ վերջինը (իմն յՈվ չափեաց ղերկինս» և ալլն) կալ և Ս. Գրքում»:

Արձադանք¹⁾-ի կրիտիկոս պ. Բարամեանը, միանդամալն լանդէպս մէջ բերելով Ղաղար փարպեցու պատմութեան լաւաջաբանի վաւերականութեան խնդիրը, նկատում է. «Ձարմանալու է արդարև, որ ցարդ ոչ ոք ուշադիր չէ եղել փարպեցու լաւաջաբանին, որի անկապ և բաղմաթիւ ընդմիջարկութիւններով խանգարւած լինելը ոչ ոք չէ նկատել»: Այս բոլոր պէիս բուն խնդիրը մեղ չէ զրաղեցնում, բայց թէ որքան իրաւացի է պ. Բարամեանի նկատողութիւնը, ընթերցողը կարող է դատել, կարդալով պ. Խալաթեանի «Ղ. փարպեցի և դործք նորին» աշխատութեան երես 55—57¹⁾»:

1) Ի գէպ յիշե՛նք նոյն կրիտիկոսի մի ուրիշ համանման վարմունքը նոյն պ.

Նույն պ. Քարամանը նկատում է. «Պ: Մ. Փաւստոսի հեղինակութիւն չ'ունենալը բացատրում է նրանով՝ որ նա ձապաղ լեզուով է գրած, լույն ժամանակաշրջան է և հակակաթողիկոսական ձգտումն է ցոյց տալիս. համաձայնելով աչս պատճառաբանութեան, ես (ախիւնքն Քարաման) առաւել մեծ պատճառ եմ համարում նորա հեղինակութեան անկման աչն հանգամանքը, որ Խորենացու պատմութեան անհամաձայն էր պատմում, ուստի ինքն ըստ ինքեան խոտելի էր աչն պատմադիրներին, որոնք Խորենացու աշակերտներն էին ամենքն ևս» (Արձագանք, № 4, էջ 10): Ահա ինչ եմ ասել ես իմ փորձի ներածութեան մէջ (եր. II). «Կարդալով մեր միջնադարեան պատմիչներին, մենք նկատում ենք, որ Փաւստոսի երկասիրութիւնը նրանց համար ծառայել է միայն որպէս երկրորդական աղբիւր: Աչն սակաւաթիւ վկայութիւնները, որ քաղում են նրանք Բուզանդարանից, մեծ մասամբ աչն տեսակ իրողութիւններ են, որոնք ուղղակի չեն հակասում Մովսէս Խորենացու պատմութեանը: Առհասարակ քերթողահօր հեղինակութիւնը անհամեմատ աւելի բարձր է եղել ինչ հայոց գրականական աշխարհում»:

Ալեներն է որ պ. Քարամանի խօսքերը հիմնած են իմ խօսքերի վերաչ. բայց ղուր է նա կարծում որ եթէ Խորենացու հեղինակութիւնը բարձր էր, ուրեմն Փաւստոսի վարկը ընկած պիտի լինէր: Աւելի մօտ կը լինէինք ճշմարտութեանը եթէ ասէինք՝ որովհետեւ Խորենացին Բագրատունեաց պատմիչ է, ալդ պատճառով նրան հետեւել են աչն հաչ պատմադիրները, որոնք ապրել և գործել են Բագրատունեաց թագաւորութեան շրջանում կամ Բագրատունի իշխանների անմիջական հովանաւորութեան ներքոյ, իսկ աչն հետեւող աչն մեծ համարումը, որ մեր նախնիք ունէին քերթողահօր անմահ գործի մասին, անցաւ աւանդաբար սերնդէ սերունդ մինչև մեր օրերը:

Նկատելով որ Փաւստոսի ձեռագիրների մասին ես չատ քիչ եմ խօսում, պ. Քարամանը աւելացնում է հետեւեալ լանդիմանութիւնը. «Աչդ առաւել ևս պահանջելի էր պ. Մ.-ից, որովհետեւ գտնելով Իջմիածնում և Վիեննայում՝ չատ քարմար առիթ ունէր Փաւստոսի ձեռագիրները աչքէ անցնելու»: Նախ՝ ես ըստ իմ թոյլ կարողութեան ուսումնասիրել եմ Էջ-

Խալաթեանի նկատմամբ: Մօսկայի Հնագիտական Ժողովի նխտերէց մէկում պ. Խալաթեանը կարգացել է մի ռեֆերատ Հին Հայոց նորագիտ Անդրեյ Շաստուկովի մասին: Այդ ռեֆերատի բովանդակութիւնը յայտնի եղաւ նաեւ պ. Քարամանին: Արձագանքաւ այս տարւայ առաջին կամարում հրատարակած մի զեկուցումից, որտեղ է միջին այլոց յիշած է պ. Խալաթեանի այն ապացոյցը թէ՛ Վերջոս Հայոց պատմագիրը... նոյնպէս Անդրեյին աստուած է կոչում: Բայց արեւ ու տեսէք, որ Արձագանքաւ կրիտիկոսը նոյն լրագրի միջոցով մի և նոյն պ. Խալաթեանի բերած փաստը ցիտատով հանդերձ հարկ է կամարում հրատարակել, որպէս զգլխաւոր ապացոյցութիւն, որի մասին Արձագանքաւ-ի № 1 զեկուցման մէջ էր խօսք չէ եղել: (Արձագանք, № 3)

միածնի մատենադարանի գրչագիրներինց երեքը, ինչ վերաբերում է Վիեննային, պ. Քարամանին չալտի պիտի լինէր, որ աղյուսող Փաւստոսի գրչագիր չը կայ։ Վերջապէս, ալդ տեսակ լանդիմանութիւն անող կրիտիկոսը, որ աւելի յարմար առիթն է ունեցել Բուզանդի ձեռագիրները քննելու, պէտք է ծանօթացնէր մեզ իւր հետազոտութիւնների արդիւնքներին և ոչ թէ իմ խօսքերը կրկնելով բաւականանար, ինչպէս կը համոզւի ընթերցողը հետեւեալ համեմատութիւնից.

Ե. Մ. ասում է՝

«Փաւստոսին ինչող հալ մասենադիրները ճանաչում են նրան որպէս յներսէսի պատմութեան» կամ «Հայոց պատմութեան» հեղինակի։ Պրոկոպիոս Կեսարացին դռն անունն է տալիս իր աղբիւրներից մէկին որ ինչպէս կարծում են, Բուզանդի երկն է։ Սակայն Ս. Էջմիածնի մատենադարանում մեր տեսած երկու գրչագիր օրինակները կրում են լոկ «Բուզանդարան պատմութիւն» վերնագիրը։ Նոյն մատենադարանի ձեռագիր ժողովածոներից մէկում կալ մի ծաղկաքաղ «Բուզագրեան պատմութեան»։

(«Փաւստոս Բուզանդ», եր. 24—25, ծնթ. 3)

պ. Քարամանը ասում է՝

«Ինչպէս աեսանք Ղ. Փարպեցու իսկական չառաջաքանի մէջ Փաւստոս Բուզանդացու գործը կոչում էր «Հայոց պատմութիւն», իսկ ոմանք անուանում են ալդ և յներսիսի պատմութիւն», բայց ալդ անուամբ չը կալ և մի հաւանք ձեռագիր բոլոր մեր չալտի ձեռագրների ժողովածոների մէջ, ինչպէս անձամբ ստուգել եմ, Վենետիկ և Էջմիածնի բոլոր ձեռագիրների վերնագիրն է «Բուզանդարան պատմութիւն»...

(«Արժագանք», № 6, եր. 6)

Խօսելով Մեսրոպ երէցի և Փաւստոսի գրածների չարաբերութեան մասին, պ. Քարամանը նկատում է. «Իմ (Քարամանիս) համեմատութիւնիցս երևում է, որ Մեսրոպը ծաղկաքաղ է արել միմիայն Բուզանդարանից և չէ օգտւել ուրիշ պատմագիրներից, ինչպէս կարծում է պ. Մ. եր. 47. ծանօթ. 1. եթէ պ. Մ. որ և է ալ աղբիւր էր նկատում Մեսրոպի գործում, պարտական էր չալտել, որովհետեւ ալդ խնդիրը մեծ կապ ունի Բուզանդարանի հետ» («Արժագանք», № 6, եր. 8)։—Համարձակւում եմ չը հաւատալ պ. Քարամանին և շատ հաւանական եմ գտնում որ, իւր մեթոդին հաւատարիմ կրիտիկոսը իրան է վերագրում իմ («Փաւստոս Բուզանդ», եր. 47) արած համեմատութիւնը։ Եթէ նա ճշմարիտ համեմատաբար ուսումնասիրած լինէր Փաւստոսի և Մեսրոպի աշխատութիւնները, չէր կարող ասել թէ ինքը՝ պ. Քարաման «թեթեւակի համեմատութեամբ» («Արժագանք», № 6, եր. 8) է բաւականանում, չէր կարող ասել թէ Մեսրոպ

„արտագրում է Բուզանդարանի մի հատւածը“ (»Արձագանք«, № 4, եր. 10), քանի որ այդ մատենագիրը բացի իմ մատնացույց արած հատւածից, արտագրած ունի Բուզանդարանից ուրիշ՝ մանր հատւածներ էլ, որ ես աւելորդ եմ համարել փշել գրքովիս մէջ. պ. Քարամեանը չէր կարող չը նկատել և այն, որ բացի Բուզանդարանից Մեսրոպ օգտւում է նաև ուրիշ աղբիւրներից, օրինակի համար՝ Խորենացուց և Նշիշէից. իսկ զիտմամբ որոշակի չեմ ցուց տալիս տեղերը որպէս զի իմ անձնապատասխան կրիտիկոսը նեղութիւն քաշէ իմ ասածները՝ ստուգելու համար՝ աշխատել այն գրքերի վերայ, որոնց ուսումնասիրութեան համար ոչ թէ չաբաթներ, այլ տարիներ են հարկաւոր...

Յամենայն դէպս ես չնորհակալ եմ իմ ոչ կատարելապէս խղճմաստէր քննադատներից և արդարացնում եմ նրանց՝ ռուս կրիտիկոս Դորրօլիւբովի խօսքերով. „Восторженные хвалители вообще рѣдко бываютъ истинно-полезны для объясненія публикѣ дѣйствительнаго значенія писателя: порицатели въ этомъ случаѣ гораздо надежныѣ: выискивая недостатки (даже и тамъ, гдѣ ихъ нѣтъ), они все-таки представляютъ свои требованія и даютъ возможность судить, насколько писатель удовлетво-ряетъ или не удовлетворяетъ имъ“.